

ԳՐԱԽԱՆԱԿԱՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐԵՎՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ

Վերջերս Հայպետհրատը լույս ընծայեց Հայկ. ՍՍՌ գիտ. ակադեմիայի արևելագիտության ակադեմիկոսի գիտաշխատողներ Ե. Ղ. Սարգսյանի և Ռ. Գ. Սահակյանի «Հայ ժողովրդի նոր շրջանի այստմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ» գրքույկը:

Ի՞նչ խնդիրներ են հեղինակներն առաջադրել իրենց աշխատության մեջ:

Գրքույկի հեղինակների նպատակն է եղել ցույց տալ թուրք պատմաբանների պատմության նենգափոխման փաստերը, այն, թե ի՞նչ հարցերում և ինչպե՞ս են նրանք կանխամտածված կերպով կեղծում պատմական իրողությունները, դրանք հարմարեցնելով իրենց նպատակներին:

Թուրքական բազմաթիվ հրատարակությունների, աղբյուրների, պատմական վավերագրերի, արխիվային նյութերի ու փաստաթղթերի հանգամանալից ուսումնասիրության հիման վրա էլ հենց գրքույկի հեղինակները մերկացնում են թուրք «գիտնականների» կեղծիքն ու զրպարտանքները, որ դրսևորվում են հիմնականում երեք առանցքային հարցերում:

Առաջին կեղծիքը, որ մերկացվում է գրքույկում, դա թուրք ցեղի գերազանցությանը նվիրված հակագիտական, ռասայական տեսությունն է, այն կեղծիքը, թե իրոք թուրքերը եղել են Անատոլիայի ամենահնագույն բնակիչները: Կարաբեքիր փաշան իր արյունոտ արարքը ճգնում է արդարացնել թուրքերի «պատմական իրավունքներով», պնդելով, թե «...սույն երկրամասը հայերի զալուց քսան դար առաջ այդ տեղերում թուրանական ցեղեր էին ապրում: Ուրարտացիները հիմնել են մի փայլուն քաղաքակրթություն և Վանի վիմագրությունները վերաբերում են ոչ թե հայերին, այլ միայն այս թուրանական ցեղերին...»:

«Կարահիսարի ավազակային պետության» (Մարքս) ժառանգորդը մոռանում է, որ Փոքր Ասիան և Հայաստանը դեռ հաղարամյակներ առաջ իր բարձր զարգացած բնիկ ժողովուրդներն են ունեցել: Նրանք հպարտանալով Զինգիզ խանի արյունոտ փառքով, երես են շուտ տալիս պատմական ճշմարտությունից: Իսկ այդ ճշմարտությունը Մարքսի և էնգելսի բերանով ասում է. «...Տասներկու միլիոն սլավոններ, հույներ, ռուսներ, առնատներ, մեկ միլիոն թուրքերն են հպատակվում, և մինչև վերջին ժամանակներս կարող էր թվալ, թե բոլոր այդ տարբեր ցեղերի մեջ վերջինս իրոք որ տիրապետելու ամենաընդունակն է... բայց երբ մենք տեսնում ենք, թե ինչպիսի խղճալի վախճան է ունենում քաղաքակրթության ճանապարհին կանգնելու թուրքական կառավարության բոլոր փորձերը, ինչպես իսլամական ֆանատիզմը... Ավստրիայի ու Ռուսաստանի օգնությունը օգտագործեց, որպեսզի դարձյալ իշխանության հասնի և ոչնչացնի դեպի առաջադիմությունը կատաղիկող ամեն մի փորձ... որ Հունաստանը իր անկախությանն է ձգտում, Հայաստանի մի մասը Ռուսաստանի իշխանության տակ է անցնում... այն ժամանակ մենք պետք է համաձայնվենք, որ նվիրույթով թուրքերի ներկայությունը իրենից մի լուրջ խոչընդոտ է հանդիսանում Թրակո-իլլիրյան թերակղզու բնական հարստությունների զարգացման համար»:

Ահա թե քաղաքակրթության ինչպիսի «տարածողներ» և պետությունների ինչպիսի «ստեղծողներ» են եղել պանթուրքիզմի այսօրվա ջատագովների նախորդները:

Ամեն ինչ պարզ է ու հասկանալի, բայց թուրք հեղինակները գրում են միայն կեղծելու, մոլորեցնելու ցանկությամբ, որպեսզի սերունդներին դաստիարակեն նույն այդ վայրենի պանթուրքիզմի ոգով, ջարդելու, կոտորելու, նվաճելու ոգով:

Գրքույկի հեղինակները քաղվածքներ բերելով էսադ Ուրասի, Դյուկբիլգինի և մյուս հեղինակների գրքերից, մերկացնում են նաև այն ամբողջովին կեղծ թեզը, թե հայերը Արևմտյան Հայաստանում կազմել են բնակչության չնչին տոկոսը: Այսպես, օրինակ, էսադ Ուրասը գրում է. «...հայերը ոչ մի տեղում, նույնիսկ Բիթլիսի, Վանի, էրզրումի վիլայեթներում, մեծամասնություն չեն կազմում...»:

«Ազգային կովի սկիզբը» գրքում պրոֆ. Թախթաչյանը Գյուկերիզիներ պնդում է. «Ամբողջ պատմության ընթացքում թրքության հայրենիքը հանդիսացող (?) արևելյան վիլայեթներում հայերը վաղուց ի վեր մի շնչին փոքրամասնություն էին կազմում»:

Ինչ վերաբերում է հայերի թվին, ապա անաշու լինելու համար գրքուկի հեղինակները բերում են օտար հեղինակների տվյալները: Այսպես, Ջորջ Լենցովսկու տվյալներով արտաքսված հայերի թիվը մոտ երկու միլիոն էր: Ֆրանսիական ժուռնալիստ Մորիս Պեռնոյի տվյալներով Արևմտյան Հայաստանում հայերի թիվը 2,5 միլիոն էր և այլն: Ուրեմն, որն է պատմական իրողությունը: Դրա պատասխանը գրքուկի հեղինակները թողնում են դարձյալ թուրք չարդարարների. «Թուրքական հողի վրա (?) ապրելու և աշխատելու հայերի բոլոր իրավունքները լրիվ վերացվել են, դրա պատասխանատվությունը կառավարությունն ամբողջովին իր վրա է վերցրել և հրաման տվել, որ նույնիսկ օրորոցի երեխաներին չսնայեն... նրանց պատճառաբանությունների վրա ուշադրություն մի դարձրեք, հեռացրեք նրանց՝ կանանց թե երեխաներին, ինչ էլ լինի, նույնիսկ եթե ի վիճակի չեն շարժվելու... ուրիշ տեղերում կիրառված անուղղակի միջոցների փոխարեն կարելի է ապահով կերպով օգտագործել ուղղակի միջոցները... առանց վախենալու որևէ պատասխանատվությունից...»:

Սա գրել է Թալեաթը, գրել է հայ մայրերի ու երեխաների այդ վայրագ դահիճը, բայց կարդալով այդ մանկասպանի կոշը, ակամայից հիշում ես Հիտլերին, արիական ցեղի արյունակզակ վիժվածքին, որն իր զինվորներին պատգամ էր տալիս կրակել ամեն մի ոչ արիացու վրա, սպանել պատահած ամեն մի ռուսի և ոչ ոք նրանց չի մեղադրի, կարևոր չէ, թե ով է ում հաջորդել, կարևորն այն է, որ նրանք մարդկության դեմ ոճիր էին նյութում կազմակերպված, նախապես ծրագրված կերպով, «օրենքի» ուժ տալով իրենց շարագործությանը: Թալեաթի այս կոշը արտահայտում էր երիտթուրքական պարտիայի այն որոշման ոգին, որն ընդունվել էր այդ պարտիայի գաղտնի խորհրդակցությունում: Այդ խորհրդակցության հիմնական զեկուցող, երիտթուրքական կոմիտեի պատասխանատու քարտուղար ղոկտոր Նազիմը հրահանգում է. «...Պետք է, որ հայ ազգը արմատախիլ ըլլա... հայ անունը մոռացվի... ոչ թուրք տարրերը թող չնշվին, որ ազգություն, և որ կրոնքին ալ պատկանած ըլլան...»:

Միլիոնավոր հայերին քնաչնչելը, իրոք որ բավականին մտահոգություն պատճառող գործ էր և ղոկտի լինելով Դախաուի ու Մայգանեկի իրենց հաջորդների տեխնիկական ձեռնբերությունից, թուրք մարդասպանները այնուամենայնիվ չեն կորցնում իրենց. «Հայերին քնաչնչելու գործը անգնե, ձեռքերը կապված հայերը, երեխաները, ծերերն ու անկարները մինչև վերջին անհատը սպանելը...», այդ «հեղինակավոր» ժողովրդի որոշում է հանձնել բանտերում փակված շեփերի կոշվող մարդասպաններին, որոնց ջոկատները վստահելի խմբապետների հրահրողությամբ «...հայերը մինչև վերջին անհատը անմիջապես կսպանեն, որպեսզի հանրային առողջությունը չվնասվի, դիակները նախապես պատրաստված փուրերուն մեջ կձգեն ու կթաղեն: Այս հայերուն քով գտնվող գույքը, դրամը և զոհարեղներն ալ իբրև ավար՝ շեփերուն կբաժանվի...»: Իր վայրագությամբ միայն ֆաշիստական մոլագարների ոճրագործության հետ համեմատելի այս կանխամտածված որոշման զոհերի իրական թիվը թաքցնելու, ոճիրը նյութողներին արդարացնելու նպատակն են հետապնդում թուրք պատմաբաններն ու զործիշները, այդ նույն նպատակով է, որ ջանում են երիտթուրքական շարագործությունը ներկայացնել որպես հետևանք հնչակյան և դաշնակցական կոմիտեների այն գործունեության, որի նպատակն է եղել իբր հայկական հարց հորինելով, օտարերկրյա պետությունների միջամտությամբ սպառնալիք ստեղծել Թուրքիայի անկախությանը: Գրքուկի հեղինակները գիտական թափանցամտությամբ պարզաբանելով այս կեղծ փաստարկի էությունը, մերկացնում են թուրք հեղինակների նաև այս կեղծիքը, անհերքելի փաստերով ցույց տալով, որ մինչև այդ կոմիտեների գոյությունն էլ թուրքական բռնությունների դեմ հայ ժողովուրդը իր ազգային ազատագրական դարավոր պայքարը չի դադարեցրել և հենց դրա համար էլ երիտթուրքերն ու քեմալականները որոշեցին իսպառ ազատվել հայ ժողովրդից՝ մասսայաբար կոտորելով նրան:

Գրքուկում մերկացվող մյուս կեղծիքն այն է, թե իբր օսերքին կոիվներով ու լեհաստանի դեմ պատերազմով խիստ զբաղված լինելու ժամանակամիջոցին կոմկասում՝ Ադրեջանում, Հայաստանում և Վրաստանում սովետական Ռուսաստանի ուժերը թույլ ու քայքայված էին և այդ պետությունների ու ժողովուրդների խորհրդայնացումը այդ ճակատում հնարավոր էր դարձնել միայն թուրքական օգնության շնորհիվ, — ինչպես գրում է օրինակ Թեվֆիկ Բըլքիլը օղուն: Այդ ի՞նչ օգնության մասին է բարբառում հեղինակը, երբ Մուստաֆա Քեմալի զլխավորած ներկայացուցչական հանձնաժողովը 1920 թվականի սկզբներին որոշում է. «Արևելյան ճակատում անցկացնել պաշտոնական կամ ոչ պաշտոնական զորահավաք և սկսել զորքերի կենտրոնացումը՝ թիկուն»:

քից կովկասյան արդեթը ոչնչացնելու համար»։ Դույն այնքան էլ որոշակի չէ իմպերիալիստական ձգտումը։ Ահա ազգային մեծ ժողովում Քեմալի որոշակի, հստակ իմպերիալիզմը. «Թուրքիայի սահմանները պետք է ընդգրկեն Բաթումը, Կարսը, Արդահանը՝ Կովկասում, Մոսկովը և Դիարբեքիրը՝ Միջագետքում»։ Սա է թուրք բուրժուազիայի «ազգային ազատագրական պայքարը», սա է այն «օղնությունը», որի շնորհիվ, երևի, Անդրկովկասի ժողովուրդները «իրենց բախտի տերը դարձան»։ Իսկ միթե Քեմալի իմպերիալիզմը, պանթուրքիզմը որևէ բանով տարբերվում էր երիտթուրքերի պանթուրքիզմից, միթե նորերը հենց որևէ բանով տարբերվում էին իրենց նվաճողական ձգտումների մեջ։ Փորձենք համեմատել դրանք։ Ահա և 1918 թրվականին Բաթումի բանակցությունների ժամանակ արված Զեմալ փաշայի հայտարարությունը. «...Հայաստանը միշտ եղել է ուսնների հետ և եղել է նրանց դիտքը, իսկ ուսները հանդիսանում են մեր երգիչը, պատմական իշխամիները և այդ պատճառով էլ մենք մեր ճանապարհից կտրենք այն բոլորը, ինչ կխանգարի մեզ մեր նպատակին հասնելու։ Մենք պետք է ընդարձակվենք դեպի Արևելք՝ դեպի Բաքու, Դաղստան, Թուրքեստան և Ադրբեջան... Մենք պետք է ճանապարհ հարթենք դեպի այդ երկրամասերը։ Իսկ դուք, հայերդ կանդնած եք այդ ճանապարհին»։ Հայերի ու Հայաստանի, ինչպես և ողջ Անդրկովկասի նկատմամբ թուրքական բուրժուազիայի վերնախավի նվաճողական քաղաքականության հիմքում ընկած էր ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ հնից եկող թշնամանքը, միայն թե թուրք հեղինակները սպեկուլյացիայի ենթարկելով վերջին շրջանում ժողովրդական լայն խավերի ազգային-ազատագրական պայքարը, փորձում են դրանով բողոքել այն բոլոր վայրագ ասպատակությունները, որոնց նպատակները շատ և շատ հեռու էին ազատագրական պայքարի նպատակներից։ Այդ ժամանակաշրջանի բարձր պայքարում թուրք նվաճողների դաժանությունների էությունը հասկանալի է լինում, երբ կարդում ենք մեծ Լենինի տված բնորոշումը նույն ժամանակաշրջանի լեհական բուրժուազիայի նվաճողական քաղաքականությանը՝ ուղղված ոչ լեհ ժողովրդի դեմ. «Լեհաստանը պատկանում է նրանց թվին, որոնք ամենից ավելի են թշնամաբար տրամադրված վերլիկոռական ազդությունների դեմ և որոնք ամենից ավելի հավակնություններ ունեն լեհերով չբնակեցված տերիտորիաների մեծ մասի վերաբերմամբ... բացի դրանից նրան (լեհական բուրժուական ռեսպուբլիկային—Ս. Բ.) հենց այդ ուղղությամբ մղում է Լեհաստանի հին, դարավոր պայքարը։ Այդ հին, դարավոր պայքարը Լեհաստանը չի կարող թողնել նաև ներկայումս»², Այս ղեհաստական ամբողջությամբ վերաբերում է նաև թուրքական բուրժուազիայի վերնախավին, մանավանդ եթե նկատի ունենանք, որ «Կարահիսարի ավազակային պետության» ժամանակներից սկսած մինչև քեմալականները թուրքական պետական մեքենան չի զաղարկել օտար ազդությունների բնաջնջման, ասիմիլյացիայի պանթուրքական «հին, դարավոր պայքարից»։ Ահա իսլամիզմի այդ դարավոր անմաքուր պայքարն էր, որ Քեմալը կարաբեքիրների արյունոտ սրի միջոցով մղում էր Անդրկովկասում։

Գրքուկի հեղինակները թուրքական ազդությունների բերված բազմաթիվ փաստերի հիման վրա մերկացնում են պատմության կեղծարարներին, որոնք փորձում են հավասարության նշան դնել ազգային-ազատագրական շարժման և ուրիշ ժողովուրդներին բնաջնջելու ճանապարհով տերիտորիաներ զավթելու արյունոտ պայքարի միջև։ Նրանք համոզիչ փաստարկներով ցույց են տալիս թուրքերով շրջակեցված տերիտորիաների մեծ մասի վերաբերմամբ... թուրքական բուրժուազիայի անբասոնիստական ձգտումներին, փոքր ազդություններին բնաջնջելու «հին, դարավոր այն պայքարին» էությունը, որ Մուստաֆա Քեմալը մղում էր Անդրկովկասում։ Այն վառ կերպով դրսևորված է 1920 թվականի օգոստոսի 14-ին արտասանած Քեմալի ճառում, ուր նա հռչակում է. «Ազգային մեծ ժողովը երեք վիլայեթների (Կարսի, Բաթումի և Արդահանի—Ս. Բ.) հարցի կապակցությամբ լիազորել է Մինիստրների խորհրդին օկուպացնել դրանք՝ հենց որ հնարավորություն ստեղծվի։ Այսպիսով հունիսի 6-ին մեր կողմից Արևելյան բանակին հրաման տրվեց պատրաստվել հարձակման»։

Թուրք հեղինակները սրան այլ անուն չեն դնում, քան «մեծ ավանդ» Անդրկովկասում սովետական կարգերի հաստատման գործում։

Ինտլյուցիայի մեծ առաջնորդ Լենինը այս և օտարերկրյա իմպերիալիստների բազմաթիվ խարդավանքները նկատի ունենալով գրում էր. «...Կովկասում ներկայումս հյուսվում են շատ բարդ պայմաններ... ըստ որում մեր վզին կարող են պատերազմ փաթաթել օրավուր... իսկ եթե մեր վզին պատերազմ փաթաթեն, ապա դա մեզ խոստանում է ինչ ավելի ուժեղացում և մեր դրության ամրապնդում, քան առաջ... Մենք կարող ենք դրա վրա միանգամայն հանդիստ նա-

